ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
**ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ**
**ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**
ՀՀ, 1101, ք.Էջմիածին, Սբ. Մ. Մաշտոցի 0
Հեռ. +374 (231) 53663
Էլ. փոստ: info@ejmiatsin.am

**РЕСПУБЛИКА АРМЕНИЯ**
**АРМАВИРСКИЙ МАРЗ**
**МЭРИЯ**
**ГОРОДА ВАГАРШАПАТ**
РА, 1101, г. Эчмиадзин, ул. Св. М. Маштоца 0
Тел.: +374 (231) 53663
Эл.почта: info@ejmiatsin.am

**REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, MUNICIPALITY OF VAGHARSHAPAT**
Address: 0 St. M. Mashtots Str., 1101, Ejmiatsin, RA, Tel. +374 (231) 53663, E-mail: info@ejmiatsin.am

№ 5177

29 սեպտեմբեր 2022թ.

**ԻԱԿ ՆԱԽԱԳԱՀ**
**ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ**

Հարգելի՛ Շուշան Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր 26.09.2022թ. հարցման՝ հայտնում ենք, որ համայնքի տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձինք համարվում են համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գրիգոր Հարությունյանը եւ համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Սիրանուշ Գեւորգյանը:

Կից ներկայացնում ենք իրավական ակտերի պատճենները, համաձայն որոնց նրանք նշանակված են համապատասխան պաշտոնին:

Նրանց մասին տեղեկատվություն կարելի է գտնել համայնքապետարանի պաշտոնական կայք էջի «Աշխատակազմ» բաժնում՝ նշված հղումով. https://ejmiatsin.am/city-authorities/#section3

Կցում ենք նաեւ նրանց հետ կապի միջոցները.

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գրիգոր Հարությունյան
+374-231-53663/400
grigor.harutyunyan@ejmiatsin.am

Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Սիրանուշ Գեւորգյան
+374-231-53663/530
+374-93-123438
siranush.gevorgyan@ejmiatsin.am
siranush.gevorgian@gmail.com

Հարգանքով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ**

Կատ.՝ Ս. Գևորգյան
Հեռ.՝ +374 231 53663-530

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն   Թ Ի Վ 59

«25» փետրվարի 2022թ.                                                  ք.Էջմիածին

## ՍԻՐԱՆՈՒՇ ՍԵԴՐԱԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԱՄՈՒԼԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հանրային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետի, 9-րդ հոդվածի 15-րդ կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և 57-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով ք.Էջմիածին, Չարենց 13 շենքի 16 բնակարանի բնակչուհի՝ Սիրանուշ Սեդրակի Գևորգյանի դիմումը՝

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Սիրանուշ Սեդրակի Գևորգյանին 2022 թվականի մարտի 1-ից նշանակել Վաղարշապատ համայնքի ղեկավարի մամուլի քարտուղարի պաշտոնում:
2. Աշխատավարձը համաձայն հաստիքացուցակի:
3. Գլխավոր հաշվապահին կատարել համապատասխան ձևակերպում:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ                                        Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 212

«22» օգոստոսի 2022թ. ք.Էջմիածին

## ԳՐԻԳՈՐ ԴԱՎԹԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ (ՊԱՇՏՈՆԻ ԾԱԾԿԱԳԻՐ 1.1-1) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի 19.08.2022թ. մրցույթի արդյունքներն ամփոփելու մասին թիվ 6 որոշումը և աշխատակազմի քարտուղարի (պաշտոնի ծածկագիր 1.1-1) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված Գրիգոր Դավթի Հարությունյանի դիմումը, հաշվի առնելով վերջինիս նախկինում համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու և համայնքային ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան շնորհված լինելու հանգամանքը և ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 2.1-ի կետով, ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 29.08.2006թ. թիվ 13-Ն հրամանով հաստատված հավելվածի 76-րդ կետով.

### ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Գրիգոր Դավթի Հարությունյանին նշանակել Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի (պաշտոնի ծածկագիր 1.1-1) համայնքային ծառայության պաշտոնում:
2. Համայնքային ծառայության պաշտոնում նշանակված անձի պարտականությունների կատարման սկիզբ սահմանել 2022թ. օգոստոսի 22-ը:
3. Համայնքային ծառայության պաշտոնում նշանակված անձի պաշտոնային դրույքաչափը սահմանել ըստ հաստիքացուցակի:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ